«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝
«Անդրանիկ ՖԱ» ՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ vardan.dav@bk.ru

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22.05.2025թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Արփի Նազարյան
	Հենրիկ Խաչատրյան
	Դավիթ Բակլաչյան
	Նարեկ Ադամյան

Վարույթ՝	ԱԽ-140
Խախտում՝	1. «Անդրանիկ» թիմի ֆուտբոլիստ Խուան Դավիդ Բարրենեչի Պալասիոսի (43990) կողմից գնդակի համար պայքարում շատ կոպիտ խախտում կատարելը (Հավելված 1 Բ, 14-րդ կետ) 2. «Անդրանիկ» թիմի երկրպագուների կողմից խաղը սպասարկող անձնակազմի հասցեին վիրավորական արտահայտություն թույլ տալը, անհարգալից արարքներ թույլ տալը (Հավելված 1 Ա, 23-րդ կետ)
Առաջնություն՝	2024-2025 Հայաստանի Առաջին Խմբի Առաջնություն
Խաղ՝	«Լեռնային Արցախ» - «Անդրանիկ», 14.05.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝«Անդրանիկ» թիմի ֆուտբոլիստ Խուան Դավիդ Բարրենեչի Պալասիոսին (43990) որակազրկել 2 (երկու) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի մայիսի 14-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): «Անդրանիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:
2. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Անդրանիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկի՝ 70,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: